



ՊԱՀՏՕՆԱԹԵՐԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ԳԱՀԻՐԷ [ԵԳԻՊՏՈՍ]

Ը. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1919

ԹԻԻ 69



ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1906 ԻՆ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Կ Ե Գ Բ . Վ Ա Ր Զ . Ժ Ո Ղ Ո Վ

Վսեմ. Պօղոս Նուպար փառա՝ Ասենապետ (ցկեանս),
Վսեմ. Եագուպ Արքիմ փառա եւ Ե. Աղաքօն պէյ՝ Փոխ-Ասենապետ,
Տեաք Մ. Անդրանիկեան՝ Գանձապետ, Վ. Մալէզեան՝ Ասենադպիր,
Առաքել պէյ Նուպար, Կ. Շէրիսնեան պէյ, Տիրան Փիլիպպոսեան, Տիգրան
Խան Քելէկեան, Միհրան Ղազարսեան՝ Խորհրդական :

Հ Ա Ս Ց Է՝ Conseil d'Administration Central
de l'Union Générale Arménienne

B. P. 1079

33, Rue Madabegh,

LE CAIRE (Egypte)

Հ . Բ . Ը . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Ն Պ Ա Տ Ա Կ Ն Է՝

Ա. Հայրենի հողին հաւասարիւմ մնացած Հայ ժողովուրդին մտաւոր եւ բարոյական զարգացմանը սատարել :

Բ. Անոր նիւթական եւ ճեղքատնական կարգաւորումը բարեփոխելու աշխատել :

Գ. Այս արդիւնքը յառաջ բերելու ծառայող որ եւ է՝ ձեռնարկ կաւմ հրատարակութեան փոխառութեան :

Հետեւաբար՝ Հ . Բ . Ը . Միութիւնը կը հիմնէ կամ նպաստներով կ'օժտէ վարժարաններ, մատենադարաններ, ընթերցարաններ, արհեստանոցներ, աշխատանքի տուններ, հիւանդանոցներ, խնամատուններ, որբանոցներ եւ ուրիշ նմանօրինակ ազգային հանրօգուտ հաստատութիւններ : Կ'օգնէ բնագաւառի կարօտ Հայերուն՝ առանց դաւանանքի եւ այլ խտրութեան : Կը պաշտպանէ զիւղացիները, անոնց հայթաղութեամբ հող, սերմնացու, կենդանի եւ գործիք : Կը քաջալերէ տեղական արհեստագործութեանց զարգացումը, կը տարածէ զիւղատնտեսական արդիական գիտելիքները, կը ստեղծէ՝ կարօտ համայնքներուն ինպատակ աշխատութեան եւ արդիւնաբերութեան նոր միջոցներ : Սովէ, հրդեհէ եւ ուրիշ սակաւ արկածներուն անմիջական օգնութիւն կը հասցնէ :

Մէկ խօսքով, իր միջոցներուն ներսը չափով. եւ իր բացորոշ նպատակին սահմանին մէջ, Միութիւնը կ'աշխատի Հայ տարաբախտ ժողովուրդին վիճակը բարւոքելու, հնարաւոր ընելով անոր կրթական զարգացումը եւ տնտեսական բարգաւաճումը :

= Ա Ն Դ Ա Մ Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Բ =

Հ . Բ . Ը . Միութեան կարող է անդամակցիլ, առանց սեռի կամ գաւանանքի խտրութեան, ամէն Հայ, ինչ դասակարգի կամ կուսակցութեան որ պատկանի, կը բաւէ որ յանձն առնէ յարգել Ընկերութեան Կանոնադիրը եւ օրը օրին հատուցանէ իր բաժնեկիցը :

Ամէն անդամ, արձանագրութեան պահուն, պարտաւոր է նախ եւ առաջ վճարել մուտքի տուրք մը, որ 10 դրուչէ պակաս չի կրնար ըլլալ, ինչպէս նաև անդամավճար մը, որ ամսական 5 դրուչէ պակաս չի կրնար ըլլալ (արտասահմանի համար համարժէք սակ) :

Առնուազն 1000 ոսկի նուիրողները Բարեբաւ Անդամ, իսկ գէթ 400 ոսկի նուիրողները Պատշոյ Անդամ կը հռչակուին : Միութեան բացառիկ ծառայութիւններ մատուցանող անձնորուն եւ սոյն տիտղոսներէն մին Վրնայ տրուիլ :

Գիւնէլ Կեդր. Վարչ. Ժողովին կաւմ Տեղական Մասնաժողովներուն :

ՆՎԵՐ ԳՐՈՑ ԳՈՒՄԱՅԱՆ Ե
ДОДАТОК ПРОФ ТУМАЯНА

ՄԻՈՒԹԻՒՆ

Ա Մ Ս Օ Ր Ե Ա Ն Գ Ա Ն Տ Յ Ո Ն Ա Թ Ե Ր Թ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

"MIOUTIOUN."

Organe de L'UNION GÉNÉRALE ARMÉNIENNE de BIENFAISANCE

B. P. 1079 33, Rue Madabegh

☞ ☞ ☞ ԹԵԼԵՖՈՆ 3605 ☞ ☞ ☞ LE CAIRE (Egypte)

Տարեկան— կանխիկ 6 Ժրանգ
Ամբերկայի համար 1 Տօլար
Չեռֆէ— քիւր 1/2 Ժրանգ

«ՄԻՈՒԹԻՒՆԸ ՉՕՐՈՒԹԻՒՆ Է»
«ԵՂՐԱՅՐ ԵՍՔ ՄԵՆՔ...»

Ը. ՏԱՐԻ

ՄԱՑԻՍ — ՅՈՒՆԻՍ 1919

Թի 69

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

ԿԱՐԵՒՈՐ ՆՊԱՍՏՆԵՐ

Կեղր. Վարչ. Ժողովը զանազան նպաստներ ևս ղրկած է, ազգօգուտ կարեւոր նպատակներու համար, բացի Բօր-Սայրտի գաղթավայրի Որբանոց-Վարժարանին, «Սիսուան» Վարժարանին և Այրիանոցին համար ըրած ծախքերէն, որոնց գումարը ամսական 500 Եգ. Ոսկին կ'անցնի:

Հալէպի Տեղ. Մասնաժողովը հեռագրովնոր Վարկ մը ուզած ըլլալով, հայրենիքի վերաշինութեան յատուկ նպատակներու համար, 500 Եգ. Ոսկիի թերհաշիւ մը ղրկուած է:

Իսկէնտէրունի և շրջակայքի տարագրեալնե. րուն ու գաղթականներուն համար ևս Եգ. Ոսկի 200:

Տէօրթ-Եօլի Քէլէկեան Որբանոցին համար ևս Եգ. Ոսկի 300, 10 հակ հանդերձեղէն (4054 կտոր, 16 ծրար և 69 օխա կերպասեղէն), 2 սընտուկ կօշիկ (200 զոյգ) և 3 սնտուկ սպասեղէն:

Հաճընի որբերուն համար Եգ. Ոսկի 300, ձեռամբ Պատույ Անդամ Տ. Յակոբ Քրքեալարեանի, որբերը Հ. Բ. Ը. Միութեան հաշույն պատրաստուելու հրահանգով:

Մալաթիոյ ազետեալներուն Եգ. Ոսկի 100, ձեռամբ Գեղր. Մեսրոպ Վարդ. Քէլէկեանի:

Մերսին-Ասանայի գաղթականներուն և ազետեալներուն համար 21 հակ հանդերձեղէն (8450 կտոր), նոյնպէս Հայֆա ղրկուելու սահմանուած 5 հակ հանդերձեղէնները (1260 կտոր), Հայֆայի տարագրեալները մեկնած ըլլալուն, ինչպէս նաև 145 սնտուկ արնետաւորներու և հողագործներու համար բազմազան մեծաքանակ գործիքներ:

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՇԻՆԱԳՐԱՍ

Կեղր. Վարչ. Ժողովը որոշում կայացուցած է «Ազատութեան Հիմնադրամ» անունին տակ Հ. Բ. Ը. Միութեան կողմէ բացառիկ ընդհանուր հանգանակութիւն մը բանալ, Հայաստանի Ազատութեան պաշտօնական հաստատման օրը, և առ այդ ղրմում կատարած է Բարիկ իր ցկեանս Ատենայեան Վսեմ. Պօղոս Նուպար փաշայի:

Ինչպէս յայտնի է, Հ. Բ. Ը. Միութիւնը ի նպաստ կողկասի գաղթականներուն 1915 ին ըսկիղըը հանգանակութիւն մը կատարած էր, և անկէ իվեր ձեռնթափ եղած է՝ և ոչ մէկ հանգանակութեան ձեռնարկելով:

Բայց Կեղր. Ժողովը կը կարծէ որ այլևս ժամանակը եկած է որ Միութիւնը, թօթափուելով

1004
664-54



իբ վերապահումներէն, հրապարակ իջնայ մեծ հանգանակութեամբ մը, որուն գլխաւոր նպատակը պիտի ըլլայ հայրենիքի վերաշինութեան յատուկ ձեռնարկներու և նպաստներու համար կառուար Հիմնադրամ մը գոյացնել :

Ն. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԵԼԿԵԱՆ ՄԷՋ

Հետզհետէ կը վերակազմուին Միութեան կիլիկիոյ Տեղ. Մասնաժողովները, զոր թուրք բարբարոսութիւնը հայածած ու քայքայած էր, շատ տեղեր նահատակելով Միութեան վարիչները :

Մերսինի, Իսիկնոսէրուհի, Տէօրթ - Եօլի, Օճազըլի, Ճիհանի և Օսմանիէի Մասնաժողովներէն վերջ, վերակազմուած են, Գերյ. Գէորգ Մ. Վ. Արսլանեանի նախաձեռնութեամբ, Ատանայի եւ Տարսոնի, իսկ Տ. Խ. Ինկիլիզեանի նախաձեռնութեամբ՝ Քիլիսի, Այնթապի և Մարաշի Տեղ. Մասնաժողովները :

Կիլիկիոյ ամէն կողմը դէպի Հ. Բ. Ը. Միութիւնը ցոյց կը տրուի անվերապահ համակրանք և շատեր բնազգօրէն կը համախմբուին անոր եզրայրական դրօշին տակ :

ԵԳՒՊՏՈՍԻ ՀԱՅ ԱՋԳ. ՄԻՈՒԹԻՒՆԸ

Եգիպտոսի Հ. Ա. Միութեան վերակազմութեան առթիւ, Հ. Բ. Ը. Միութեան երեք ներկայացուցիչով մասնակցութեան հրաւէր ուղղուած ըլլալով, Կեղը. Ժողովի կողմէ նշանակուեցան Տեարք Մ. Անդրանիկեան, Վ. Մալէզեան և Տօքթ. Պ. Սերովբեան, Տ. Վ. Մալէզեան յանուն Հ. Բ. Ը. Միութեան Հ. Ա. Միութեան Գործադիր Մարմինն ևս կ'անդամակցի :

ԱԻԱՆԴ - ԿՏԱԿ ՄԸ

Հ. Բ. Ը. Միութեան Հայֆայի Տեղ. Մասնաժողովը կը հաղորդէ որ տեղւոյն տարադրեալներէն Եգէսիացի Սարգիս Լաթիբրովեան (45 տարեկան) մեռած է և վրայէն ելած 10 օսմ. ոսկեզրամը Գոնիացի Տ. Մինաս Զաբարեանի ձեռամբ յանձնուած է Տեղ. Մասնաժողովին, իբրև աւանդ : Այն պարագային որ հանգուցեալին ժառանգորդը մինչև տարի մը երեւան չելլայ, սոյն գումարը պիտի յատկացուի Միութեան նպաստի հիմնադրամին :

ՄԱՀԱԳՈՅԺ

Ցաւով կ'արձանագրենք մահը Միութեան Գորտօպայի Մասնաճիւղի անդամներէն Տ. Յով-

հաննէս Տատուրեանի և Երեմիա Վարդանեանի, Սէլմայի Մասնաժողովին նախկին ատենադպիր Տ. Արփիար Քարահատեանի, Ֆրէզնոյի գործօն անդամուհի Տիկ. Աղաւնի Իմիրզեանի, Իսթ - Բրօվիտէնսի Մասնաճիւղի անդամուհիներէն Տիկ. Բօզա Պաղտասարեանի :

ՏԵՕՐԹ - ԵՕԼԻ ՔԷԼԷԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԸ

Միութեան Սուրիոյ և կիլիկիոյ քննիչ - պատուիրակ Տ. Միք. Նաթանեան շրջան մը ընելով Հալէպ, Հոմս, Համա և Գամասկոսի կողմերը, բոլորովին անտէր որբեր հաւաքած և Տէօրթ - Եօլ փոխադրած է, Հ. Բ. Ը. Միութեան Որբանոցին մէջ պատասպարելու և դաստիարակելու համար : Որբանոցին գլխաւոր պաշտօնեայ կարգուած է Տ. Խ. Ինկիլիզեան :

Թուրքերը Որբանոցը կիսաքանդ վիճակի մէջ թողած ըլլալով, ճարտարապետ Տ. Հրանտ Գալճի Գահրէէն յատկապէս Տէօրթ - Եօլ մեկնած է, ինքանները ու պակասները ճշդելու և պաշտօնապէս հաստատելու, ու պէտք եղած անմիջական նորոգումները կատարելու պաշտօնով :

ԿԱՐԵՒՈՐ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Որբանպաստ շարժումը կը տարածուի Ամբրիկայի զանազան հայ զաղութներուն մէջ, մասնաւորապէս Նիւ Եօրքի, Զիքակոյի և Ֆրէզնոյի մէջ : Բազմաթիւ որբասէր ազգայիններ ստանձնած են Հ. Բ. Ը. Միութեան որբերու պաշտպանութիւնը : Այս առթիւ վեր կը հանենք նաև որ Պըրուլիին Տեղ. Մասնաժողովին սարքած տօնավաճառին զուտ հասոյթը Տօլ. 890,19 և Բիլմընտի Տեղ. Մասնաժողովին սարքած հանդէսին զուտ հասոյթը Տօլ. 538 յատկացուած են Միութեան Որբանպաստ Հիմնադրամին :

Հ. Բ. Ը. Միութեան բարերար Անդամ Տիգրան Խան Քէլէկեան սիրայօժար յանձն առած է 500 Անգլ. Ոսկիի գումար մը տրամադրել Տէօրթ - Եօլի Քէլէկեան Որբանոցի նորոգութեանց համար :

ՕԳՆԵՑԻՔ Հ. Բ. Ը. Միութեան, ձեր յարմար դասած ձեռով, բայց ձեր կրցածէն աւելի, որպէսզի, մեր աչքին առջեւ, անօրութեան, մեկուրեան եւ հիւանդութեան զոհ չերթան անոնք որ կըրցան նողապիլ իրենց դահիճներուն հիւրաներէն եւ մինչեւ մեր դուռը գալ :

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

Փ. ՅԱՐԵԳԱՆԻ (1918)

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Ե Ւ Ռ Ի Ն Ա Մ Փ Ո Փ Ո Յ Թ Ը

ԱՐԺԵԹՈՒՂԹՆԵՐ	ԳՈՑԲ	ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ	ՊԱՐՏԲ
1.— Հիմնական Դրամագլուխի հաշույն	32725.721	1.— Մուտքի ճուրք	20148.994
2.— Մասնաւոր Դրամագլուխի հաշույն	9200.419	2.— Անդամավճարներու 1/6 ք	7694.405
		3.— Նուիրատուութ. (անորոշ)	10138.387
		ՄԱՄՆԱՌԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ	21459.346
ԿԱԼՈՒԱԾՆԵՐ		ԱՐԺԵԹՈՒՂԹՆ. ՊԱՐԲԵՐԱՇԻՋ. ՀԻՄՆԱԴՐԱՄ	435.554
1.— Հիմնական Դրամագլուխի հաշույն	3131.250	ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ	917.788
2.— Մասնաւոր Դրամագլուխի հաշույն	10931.783	ՊԱՐԲԵՐԱՇԻՋՈՒԱԾ ԿԱՐԱՍՈՒՔ ԵՒ ԳՐԱԴԱՐԱՆ	350. —
		ԿԵԴՐ. ՎԱՐՋ. ԺՈՂՈՎ. ԱՆԳԱՄՆԵՐՈՒ ԵՐԱՇ. ԽԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԵԹՈՒՂԹՆԵՐ	1350. —
ԵՐԱՇԽԱՆՈՐՈՒԹԻՒՆ		ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒՆԵՐ ԵՒ ԱՒԱՆԳՆԵՐ	9787.231
Կեդր. Վարչ. Ժողովի Վարիչ Անդամներու Երաշխատուածեան արժեքուղթներ	1350. —	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
		1.— Հիմնական Եկամուտ	8888.156
ԿԱՐԱՍՈՒՔ ԵՒ ԳՐԱԴԱՐԱՆ		2.— Մասնաւոր	21344.277
Նախորդ տարեշրջաններուն պարբերաշրջուած	350. —		<u>30232.433</u>
Ընթացիկ ՀԱՇԻՒՆԵՐ ԵՒ ԱՒԱՆԳՆԵՐ	7898.191	ՆՊԱՍՏ, ԵՄԽԲ, ԵՒՆ.	
ՏՊԱՐԱՆ ԵՒ «ՄԻՈՒԹԻՒՆ»	773.716	1.— Նպաստ Հիմն. Եկամուտէն	3370.610
		2.— Նպաստ Մասն. Եկամուտէն	15413.696
ՏՐԱՄԱԳՐԵԼԻ ԳՈՒՄԱՐՆԵՐ		3.— Ստիպ. Նպաստի պահեստ	205.687
Գրէտի Լիօնէ	2539.424	4.— Պարբերաշրջման պահեստ	37.109
Պանք Օթոման	7067.492	5.— Ընդհ. ծախք	1664.566
	9606.916	6.— Մասն. Դրամագլուխներու յատկացուած	538.545
Ամերիկայի Շրջ. Յանձնաժողով (Տօլ. 19132.88)	3826.576		<u>21230.213</u>
Ստուկի պատրաստ դրամ	1489.353	ՏՐԱՄԱԳՐԵԼԻ ԵԿԱՄՈՒՏ	
Ե. ՈՍԿԻ	81283.925	Եկամուտ	30232.433
		Ջեղջեղի՝ նպաստ, ծախք, եւն.	21230.213
			<u>9002.220</u>
		Ե. ՈՍԿԻ	81283.925

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Բ. Ը. Միութիւնը ներկայիս զլիսաւորարար կը վարէ, իր առանձնայատուկ միջոցներով, հետեւեալ ազգոգուտ հաստատութիւնները.—

- 1.— ՏԻԿԱՆՑ ԿԵԴՐ. ՀԱՆԴԵՐՋԱՐԱՆ. Աշխատանոց եւ Մթերանոց, Գահիրէ:
- 2.— «ՍԻՍՈՒԱՆ» ՎԱՐՃԱՐԱՆ, 2250 երկսեռ սաներ, Բօր - Ոսլիտի Գաղթավայրը:
- 3.— ՈՐԲԱՆՈՑ - ՎԱՐՃԱՐԱՆ, 350 երկսեռ որբեր, , ,
- 4.— ԱՅՐԻԱՆՈՑ - ԱՇԽԱՏԱՆՈՑ, 90 այրիներ եւ աղջիկներ, , ,
- 5.— «ՍԻՍՈՒԱՆ» ՊՕՑ - ԱՔԱՌԹՆԵՐ 210 հետազօտիչներ, , ,
- 6.— ՀԱՅՈՒՇԵԱՑ - ԱՊԱՍԱՆԱՐԱՆ, 120 այրիներ եւ աղջիկներ. Դամասկոս:
- 7.— ՀԻՒԱՆԴԱՆՈՑ - ԴԵՂԱՐԱՆ, Դամասկոս:
- 8.— «ՔԷԼԷԿԵԱՆ» ՈՐԲԱՆՈՑ, 200 որբեր, Տէօրթ-Եօլ:
- 9.— ՀԻՒԱՆԴԱՆՈՑ - ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ, Մերսին:
- 10.— ՈՐԲԱՆՈՑ, Համբըն (կազմակերպութեան մէջ):

«ՈՐԲԵՐ ՊԱՇԵԼՈՒ ԵՒ ՊԱՍՏՊԱՐԵԼՈՒ ՁԵՐ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԻԱՆԱԼԻ Է: ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻՆ ԱՍՐՈՂՋ ԱՊԱԳԱՆ ԱՅՍ ՈՐԲԵՐԵՆ ԿԱԽԱԼ Է»

ԳՆԴ. ՊՐԷՍՕՆ
ԿՈՒԿԻՈՑ ԸՆԴՀ. ՎԱՐՔԻՉ

«ՁԵՆՁԵՐՆԻԴ ԵՐԿՆՆԻՑԵՔ ԱՍԷՆՔԴ ԱԼ ԵՒ ՁԵՐ ՍԻՐՏԵՐՈՎ ԵՐՋԱՆԱԿ ՍԸ ՅՕՐԻՆԵՑԵՔ ՍԱ ՋՈՅԳ ՍԸ ԲԱՆԵՐՈՒՆ — ՍԵՐ ՈՐԲԵՐԸ:»
ՏԻԿ. Վ. ԱՐԵԱՐՈՒՆԻ

«Կ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՊԱՍՏԵՆԻՔԻ ՎԵՐՋԻՆ Տ ԱՄՍՈՒԱՆ ՄԻՋՈՅԻՆ Գ»

ԲՈՐ - ՍԱՅԻՏԻ ՈՐԲԱՆՈՑ - ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ծախսուած	3573
» » ՄԻՍՈՒԱՆ » ՎԱՐԺԱՐԱՆԻՆ »	1818
» ԱՅՐԻԱՆՈՑԻՆ (դեռակազմ) »	147
ԳԱՀԻՐԷԻ ԿԵԴՐ. ՀԱՆԳԵՐՁԱՐԱՆԻՆ վճարուած	8965
ՏԷՕՐԹ - ԵՕԼԻ ՔԷԼԷԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ (վերարացման առփիւ)	500
ԴԱՄԱՍԿՈՍԻ տարագրեալներուն, գաղթականներուն և որբերուն զրկուած	1617
ՀԱԼԷՊԻ » » » » »	2707
ՏԷՐԱՅԻ » » » » »	800
ԻՍԿԷՆՏԵՐՈՒՆԻ » » » » »	200
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ » » » » »	200
ՀԱՅՅԱՅԻ, ԱՔԻԱՅԻ, ՏԻՊԵՐԻԱՅԻ » » »	206
ՄԵՐՍԻՆ - ԱՏԱՆԱՅԻ աղետալներուն, » »	2237
ՋԷՑԹՈՒՆԻ ներգաղթին առփիւ (վերաշինութեան համար)	500
ԿԵՍԱՐԻՈՑ այրիներուն և որբերուն յատկացուած	300
ԳԱՀԻՐԷԻ վերջին աղետալներուն »	257
ՄԱՍՆԱԻՈՐՆԵՐՈՒ կողմէ աննատական նպատակներ	341
ԶԱՆԱԶԱՆ ԵՊԱՍՏԵՆԻՔ	794
	<u>25162</u>

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ [ՍԵՊՏ. 1918 — ԱՊՐԻԼ 1919]

ԵԳ. ՈՍԿԻ



Կ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅՈՒՇԵԱՑ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԸ

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ԵՂՔԱՅԲԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԸ

ԴՍՄԱՍԿՈՍ

ՀԻՒԱՆԴԱՆՈՅ.— Հ. Բ. Ը. Միութեան Հիւանդանոցը, իր դարմանատունով և դեղարանով, տպարհաստատութիւն մը եղած է, շնորհիւ բժշկապետ Տօքթ. Խ. Գափամանեանի, իրեն աջակից ունենալով մնայուն բժիշկ Տօքթ. Գափանի Բիւրքեան և դեղագործ Տ. Հմայեակ Փափազեան, Տիրոջ մաքրութիւնը, կարգ ու սարքը, այցելուներուն գնահատման կ'արժանան, ներգաղթի հետեւանքով տեղւոյն Հայկ. Բէմքը գոցուած ըլլալով, իր հիւանդանոցն ալ փակուեցաւ. հիւանդներն ու մաս մը մահակալներ փոխադրուեցան Միութեան հիւանդանոցը: Այժմ մեր հիւանդանոցին անկողիններուն թիւը 25 ի բարձրացած է:

Կեդր. Ժողովը Հիւանդանոց-Դեղարանին համար 2 սնտուկ և 1 տակառ մեծաքանակ զեղեր զրկեց Գամասկոսի Տեղ. Մասնաժողովին:

ԱՊՍՍԱՆԱՐԱՆ.— Հ. Բ. Ը. Միութեան Հայունեաց Ապաստանարանը ևս, Տ. Հմայեակ Ուղուրլեանի տեսչութեամբ, կը շարունակէ օգտակար հանդիսանալ: Ապաստանեալներու թիւը 65 ի իշած է ներգաղթի բերմամբ. բայց նոր ազատագրուած կիներ և աղջիկներ կ'աւելնան հետզհետէ, թէեւ տակաւին շատ ցանցառ թիւով, շնորհիւ էմիր Ֆայզալի բարեհաճ հրամանին: Վստահելի ազգական ունեցողներ կը մեկնին միատեղ դէպի հայրենիք: Զօրեղ, շատ զօրեղ ջանքի կը կարօտի ազատագրումի այս գերազանցապէս նուիրական գործը, որ ունի իր բազմադիմի կիսմիտները, երբ, օրինակի համար, անոնց մէջ կան որ զաւակներ ալ ունեցած են իրենց մահմետական ամուսինէն: Տ. Հեռոն Եօթնեղբայրեան Հավրանի գիւղերը կը մեկնի, մղուժ տալու համար ազատագրումի գործին որ ներկայիս կը պահանջէ ծայրաստիճան շրջահայեացութիւն: Իրեն տրուած է գրամ:

ՄԵՐՍԻՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՅ.— Հ. Բ. Ը. Միութեան նորակազմ Հիւանդանոցը ունի 12 անկողին. բացուած տեղի ունեցած է 15 Մայիսին, հովասուն տան մը մէջ. կոկիկ, մաքուր և լաւ տնտեսուած հաստատութիւն մըն է այդ Հիւանդանոցը՝ որ Մերսինի մէջ կարեւոր պակաս մը լրացուց, զաղթականներու երթեկներն պատճառով, Հիւանդանոցը ունի նաեւ

Ժողովրդային Դեղարան մը՝ որ կարօտեալներուն ձրի զեղ կը հայթայթէ: Հիւանդանոցն ունի ներքին մնայուն հակիչ մը, դեղագործ մը, հիւանդապահուհի մը և երկու սպասուհի: Մասնաւոր Յանձնախումբ մը կը զբաղուի Հիւանդանոցի խնամատարութեամբ. անդամներն են Տօքթ. Յակոբ Բէճէպեան, Տօքթ. Միհրան Քէչիլեան, Տօքթ. Պէտր, Տօքթ. Բարունակ Տաղլեան, դեղագործներ՝ Տ. Նազ. Բէճէպեան և Արամ Գամալիճեան, Տեարք Նշան Եսայեան և Տիրան Թապիպեան: Տեղւոյն կարծիր Խաչի Տիկինները ևս իրենց մասնաւոր հոգածութեան առարկայ ըրած են Հիւանդանոցը:

Կեդր. Ժողովը յիշեալ Հիւանդանոց-Դեղարանին համար ևս 2 սնտուկ և 1 տակառ բաւականաչափ զեղ զրկեց Մերսինի Տեղ. Մասնաժողովին:

ԳՈՐԾԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ.— Նկատելով որ Մերսինի Տեղ. Մասնաժողովը, իր դիրքով, Հ. Բ. Ը. Միութեան կիլիկեան ներկայ գործունէութեան կեդրոն ընտրուած է առժամաբար, Կեդր. Ժողովը գործիչ-պատուիրակ նշանակեց յիշեալ Մասնաժողովի ատենադպիրը Տ. Պետրոս Ուրֆալեան՝ որ յանձն առած է բոլորանուէր փարիլ Բարեգործականի ներկայ բարդ աշխատութեանց:

ՀԱՆԷՊ

Տեղ. Մասնաժողովը կը գործէ եռանդով եւ կանոնաւորութեամբ: Մշակած է նպաստի լուրջ ծրագրիներ, մասնաւորապէս կարօտ արհեստաւորներուն և հողագործներուն, փոխադարձ երաշխաւորութեան հիման վրայ, փոխատուութեամբ օգնելու մասին: Առ այդ Կեդր. Ժողովը թելադրած է, զբրամական փոխատուութեան տեղ, գործիք են. հայթայթելու ձեւը կիրարկել, նախընտրելով հաւաքական նպաստի դրութիւնը անհատական նրպաստներէ:

Մասնաժողովին պատուիրակները՝ Տօքթ. Հր. Բաղդասար և Տ. Խ. Ինկիլիդեան շրջան մը ընելով Քիլիս, Ուրֆա, Այնթապ և Մարաշ, տեղւոյն կարիքները ուսումնասիրած, նպաստի կարգադրութիւններ ըրած և յիշեալ տեղերու Մասնաժողովները վերակազմած են:

Մասնաւորապէս յօգուտ կարօտ աշխատա-

ւորներու, Հալէպի Տեղ. Մասնաժողովը տրամադր-
 րած է Ե. Ղ. 21100 Ուրֆա, Ե. Ղ. 10550 Քի-
 լիս, Ե. Ղ. 40000 Անթապ, Ե. Ղ. 30000 Մա-
 րաշ, Ե. Ղ. 5000 Հուն: Բաց աստի, Հալէպի Զօ-
 րանոց - Պատասպարանին յատկացուցած է Ե. Ղ.
 25000, կարօտեալներու զանազան նպաստներ բաշ-
 խած է Ե. Ղ. 30000, Հալէպի վերջին աղէտեալնե-
 րուն Ե. Ղ. 11550, ներգաղթի Ե. Ղ. 15000, և այլն:

Զէյթունի վերաշինութեան համար Կեդր. ժողովին կողմէ արամադրուած է Ե. Ղ. 50000 և Իր նպատակին պիտի գործածէ, անմիջապէս որ ար-
 տօնուի տարագիր Զէյթունցիներու ներգաղթը:

Հալէպի Տեղ. Մասնաժողովը հեռագրով 2000
 եգ. Ոսկիի նոր վարկ մը ուզած ըլլալով, Կեդր. ժողովը 500 եգ. Ոսկիի գումար մը զրկեց առ-
 հայր:

ԿԱՐՕՑՈՒԹԵԱՆՆԵՐ ԱՇԽԱՐՀԷՆ

— ՀԱՃԸՆԷՆ՝ Զ. Բ. Ը. Միութեան պատուոյ անդամ
 Տ. Յակոբ Գրեհաշարեան կը զրէ.—

« Երեք օր առաջ ողջամբ հասայ Հ. սօրն. քաղաքը
 աւերակ մոխրակոյտ դարձած է. հագիւրէ մի քանի տու-
 ներ մնացած են քաղքին շուրջը: Ժամանակին քաղքիս
 երկրագործութիւնը մեծ դեր ուներ ծայրուս ապրուստին
 համար. հիմա ամէն բանէ գուրկ ենք. ըստ տեղոյս սո-
 վորութեան, ձմեռուան ուտեստեղէնը պէտք է հայրայրել
 ամառուան մէջ. ձմեռը մօտալուտ է Հաճնոյ համար ան-
 հրրաժեշտօրէն զգալի պէտքերն են՝ հաց, զգեստ, անկո-
 ղին, տուն, դպրոց, հիւանդանոց և որբանոց:

« Զեր բարեգործութիւնը անմոռանալի է համայն
 հայ ազգութեան համար: Երէ յարմար կը դատէք, քննիչ
 մը զրկեցէք, որպէսզի մեր խնդրանքը նկատի առնելով
 գոհացում տրուի: Երէ մօտ ժամանակուան մէջ մեր վեր-
 վերուն դարձան չի հասնի, տարագրեալներուս մահ կըս-
 պառնայ: »

— ԻՍԿԷՆՏԵՐՈՒՆ Ի Զ. Բ. Ը. Միութեան Տեղ. Մասնա-
 ժողովը կը զրէ.—

« Ժողովս որոշած է կարող կիներու և աղջիկներու
 ձեռագործ և բրդեղէն գործել տալու միջոց մը գտնել, հո-
 դագործներու և արհեստաւորներու մուրհակով իբր փոխ
 տասնական կամ քսանական ոսկի տալ՝ իրենց համար
 պէտք եղած կենդանիները և գործիքները գնելու համար:
 Ժողովիս կողմէ առ նուազն 4000 ոսկիի պէտքը անհրա-
 ժեշտ տեսնուած է տեղոյս և շրջականերու համար: »

— ՀԱՃԸՆ Ի Հայ Ազգային Միութիւնը կը զրէ.—

« Այժմեայ մեր ընդհանուր թիւր 4000ի կը հասնի և
 քանի մը օրէն ճամբայ ելողները միասին հաշուելով 7000ը
 կ'անցնի: Մեկ մասը ընտանեկան նեցուկէ զրկուած այրի-
 ներ և մեկ մասը որբեր և որբուհիներ են, որոնք անմիջա-
 պէս յարկի մը տակ հուարուելու պէտքին են քարկուած
 են: Շրջակայ գիւղերէն և այլևայլ տեղերէ տեղս կուզան
 որբեր մերկ ու թշուառ վիճակի մէջ. ատոնց հագիւ պա-
 տառ մը չոր հաց կրնանք հայրայրել: »

« Երկրագործ դասակարգ մը ունինք որոնք գուրկ
 ըլլալով վարուցանի գործիքներէ և միջոցներէ, դատարկ կը
 բաժանուին. ունինք արհեստաւոր դասակարգներ, որոնք երէ
 ունենան իրենց արհեստին վերաբերեալ գործիքներ, կրնան
 իրենց օրապահիլը հայրայրել: »

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ
ՏԵՂԱՆԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ

Զ. Բ. Ը. Միութեան Հալէպի, Դամասկոսի, Իսկէն-
 տերունի, Մերսինի և Ատանայի Տեղ. Մասնաժողովները
 ցնոր տնօրէնութիւն արտօնեալ են իրենց գանձած մուտ-
 քի տուրքերը, անդամավճարները և նուիրատուութիւն-
 ները վար դնելու և իրենց տրամադրած նպաստի վար-
 կերուն հետ գործածելու, Կեդր. ժողովիս հրահանգներուն
 համաձայն: Սուրիոյ և Կիլիկիոյ միւս Տեղ. Մասնաժո-
 ղովները ևս առժամապէս արտօնեալ են իրենց գան-
 ձումները հետզհետէ փոխանցելու Մերսինի կամ Հալէպի
 Տեղ. Մասնաժողովներուն: Այս գործածութիւնը կամ փո-
 խանցումը պէտք է սակայն՝ կատարուին հաշուեցոյցը
 Կեդր. ժողովիս նախապէս զրկուելէ վերջ միայն:

Գահիրէ, 31 Մայիս 1919

Միութեանս Միջազգային, Պաղեստինի, Սուրիոյ,
 Կիլիկիոյ և երկրի այլ Տեղ. Մասնաժողովներուն կը հա-
 ղորդենք որ, յանուն Կեդր. ժողովիս՝ Ամերիկայի Շրջա-
 նակային Յանձնաժողովին կողմէ Ամերիկեան Հայկական
 ու Սուրիական նպաստի Գօմիթէին մօտ համագործակ-
 ցութեան մասին կատարուած պաշտօնական զիմումնե-
 րուն ի պատասխան, յիշեալ Գօմիթէն ցոյց տուած է ազ-
 նիւ պատրաստակամութիւն, երկրի իր ներկայացուցիչ-
 ներուն ուղղելով այդ առթիւ Շրջանակային Յանձնաժողո-
 վին ներկայացուցած յիշատակագրին պատճէնը:

Ըստ այնմ կը յանձնարարուի՝ Ամերիկեան Նպաս-
 տի պատկան ներկայացուցիչներուն հետ մշակել սերտ
 յարաբերութիւն և կարելիութեան սահմանին մէջ նը-
 պաստի աշխատութեանց և ձեռնարկութեանց մասին
 համաձայնիլ ու գործակցիլ:

Գահիրէ, 30 Յունիս 1919

Կը փութանք հաղորդել որ, Զինուորական Իշխա-
 նութիւններէն խնդրած ըլլալով կարելի օժանդակութիւնը
 տրամադրել Միութեանս Կիլիկեան շրջանի Տեղ. Մասնա-
 ժողովներուն և ներկայացուցիչներուն, Կիլիկիոյ Հնդհ.
 Վարի Գնդապետ Պրէման կը ծանուցանէ թէ՛ սիրայօժար
 պիտի ընծայէ պէտք եղած աջակցութիւնը և թէ՛ առայդ
 հրահանգներ տուած է իր շրջանակի տեղական իշխա-
 նութեանց:

Գահիրէ, 1 Յուլիս 1919

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԲՕՐ - ՍԱՅԵՏԻ ՀԱՅՏԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ

ԿԻՆԿԻՈՅ ՎԵՆ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

ԲՕՐ - ՍԱՅԵՏԻ ՀԱՅՏԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ

Կիլիկիոյ վեհ. Սահակ Բ. Կաթողիկոսը Ապրիլ 8ին այցելեց Բօր - Սայխտի հայկական գաղթավայրը, իր հետևորդներով հանդերձ, առաջնորդութեամբ Գեր. Թորգոմ Եպիսկ. Գուշակեանի:

Գաղթավայրը այդ առթիւ գեղազարդուած էր դրօշներով և դալարներով: Ն. Ս. Օժուժիւնը Հ. Բ. Ը. Միութեան հիւրը եղաւ, և մեծամեծ պատիւներով ընդունուեցաւ հազարաւոր գաղթականներէն, իրենց գլուխը ունենալով Նիկոմիդիոյ ձերուհազարդ Առաջնորդը Գեր. Ստեփաննոս Արքեպիսկ. Յովակիմեան, որ, շրջապատուած Որբանոցի տեսուչ Մամբրէ վարդ. Սիրունեանէ, « Սիսուան » վարժարանի տնօրէններէն, քահանաներէն և ուսուցիչներէն, ընդ առաջ գնաց Ն. Վեհափառութեան, Միութեան կողմէ իբրև պատուիրակ կը գտնուէին Կրթ. և Որբ. Յանձնախումբի յարգելի ատենապետն ու գանձապետը, Տ. Էւան Ասատուր և Տօքթ. Պ. Սերովբեան: Նաւամատոյցէն սկսեալ երկու շարքի վրայ բարևի կեցած էին Հ. Բ. Ը. Միութեան 200 պոյ - Սքառութները, Վեհափառ հիւրը առաջնորդուեցաւ մատուռ, ուր գոհաբանական աղօթքէ մը վերջ, օրհնեց վտարանդի ժողովուրդը:

Մատուռէն մինչև Վեհարան - Վրանը, որ յատկապէս պատրաստուած և զարդարուած էր արմաւենիի ճիւղերով, « Սիսուան » ի և Որբանոցի 2500 սաները իրենց ուսուցիչներով երկուստեք ցանց կազմած էին: Աշակերտները և որբերը երգեցին հայրենասիրական երգեր և հետագօտիչները մարզանքներ կատարեցին:

Կարճ հանդիսատէ մը վերջ, ի պատիւ Ն. Ս. Օժութեան տրուեցաւ ճոխ թէյասեղան մը, որուն մասնակցեցան բազմաթիւ հիւրեր և մասնաւորապէս Ջուիցեբրիայէն եկած բժշկական խումբի անդամները: Երեկոյան ժամերգութեան, Վեհ. Կաթողիկոսը խօսեցաւ մին իր յուզիչ ու գեղեցիկ քարոզներէն որ ուղղակի սիրտերուն կը խօսին: Օրհնեց Հ. Բ. Ը. Միութիւնը, վեր հանելով անոր կատարած ազգօգուտ մեծարժէք գործը, իր գաղթական ժողովուրդին կողմէ շնորհակալութիւն յայտնելով Բարեգործականի վարիչներուն, ինչպէս Անդր. Կառավարութեան և Ամերիկ. Կարմիր խաչին կողմէ ընձեռուած թանկագին օժանդակութեան համար:

Հետևեալ օրը, Ն. Վեհափառութիւնը այցելեց Որբանոց - Վարժարանն ու « Սիսուան » վարժարանը, Գեր. Թորգոմ և Գիւտ Եպիսկոպոսներու ընկերակցութեամբ: Մանկապարտէզի կիլիկեցի փոքրիկներու հայերէն բարբառը և Սուէտացի աղսց խմբերգներն ու պարերգները մեծ հրճուանք պատճառեցին վշտակիր Հայրապետին:

Կէս օրին, Վեհ. Կաթողիկոսը իր Վեհարան - Վրանին (զոր ի յիշատակ այս օրհնարի այցելութեան որոշուեցաւ անվթար պահել այս անուամբ) ընդունեց Հ. Բ. Ը. Միութեան հաստատութեանց երկսեռ պաշտօնէութիւնը, տնօրէններու և տեսուչներու առաջնորդութեամբ: Անդամ մը ևս Ն. Ս. Օժութիւնը գնահատեց և վեր հանեց Հ. Բ. Ը. Միութեան գերազանցապէս բարձր ծառայութիւնները զէպի որբն ու առհասարակ ուսումնաստենջ մանկտին, և օրհնեց Բարեգործականի բոլոր վարիչներն ու աշխատաւորները:

Հ. Բ. Ը. Միութեան Պատուոյ Անդամ եւ Կրթ. ու Որբ. Յանձնախումբին նախագահ Գեր. Թորգոմ Եպիսկ., յանուն Բարեգործականի, շնորհակալութիւն յայտնեց Վեհ. Կաթողիկոսին:

Վեհափառ Կաթողիկոսը զէպի Երուսաղէմ մեկնեցաւ Ապրիլ 10 ին:

Հ Բ Ա Պ Ա Ր Ա Կ Ե Լ Ա Ի

Յայտագիր - Վիճակացոյց մը. պատկերազարդ, ուր հրատարակուած են Հ. Բ. Ը. Միութեան սեփական զրլխաւոր հաստատութեանց և իր վերջին կարեւոր նպատներու ամփոփ ցուցակները:

Քիչ օրէն հրապարակ կը հանուի նաև պատկերազարդ զրքոյկ մը, ուր Հ. Բ. Ը. Միութեան անդամները պիտի գտնեն ուշագրաւ պատկերներ և շահեկան վիճակացոյցներ, Միութեան վերջին արդիւնաւետ գործունէութեան մասին:

Գրական իրողութիւններ, հեղինակաւոր կարծիքներ, պերճախօս բուսնաւորներ և կենդանի պատկերներ պիտի ցոյց տան այն գեղեցիկ աշխատութիւնը զոր արտայայտած է Հ. Բ. Ը. Միութիւնը, մասնաւորապէս որբախնամ բարդ գործին մէջ, առանց աղմուկի և պայքարի, իրեն նպատակ ունենալով որբերը իր ուղղակի միջոցներովը պահել սեփական հաստատութեանց մէջ, աւելի քան իր օժանդակութեան կամ հովանաւորութեան անուղղակի ձեւերով:

ՈՂԻՄՊԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ.— Զատկական տօներու առթիւ « Սիսուան » վարժարանի եւ Որբանոցի աշակերտութեան համար Ողիմպական մրցումներ կազմակերպուեցան, գլխաւոր մարզիչ Տ. Համազասպ Փանոսեանի ղեկավարութեամբ : Կրկին Յանձնախումբներ կարգադրութիւններով և մրցանակներով զբաղուեցան : Վարժարանին կից Վեհարան - Դասարանի առջևի հրապարակը զարգարուած էր հայկական և դաշնակից դրօշակներով : Երկսեռ աշակերտները, թիւով 2500, բանակի մը պէս շարուած էին : Գաղթավայրէն և քաղաքէն հանդիսականներու խումն բազմութիւն մը իր տեղը գրաւած էր : Առաջին օրը հանդէսին կը նախագահէր Նիկոմիդիոյ Առաջնորդ տարազիր ծերունազարդ Ստեփաննոս Արքեպիսկ. Յովակիմեան : Լ. Բ. Ը. Միութեան կողմէ ներկայ էր Կրթ. և Որբ. Յանձնախումբի ատենապետ Տ. Լեւոն Ասատուր :


Ըստ Յայտագրի խաղերն էին՝ 100 մէթր վազք, զոյգին մէջ մէկ ոտքը իրար կապելով 100 մէթր վազք, կարգերու միջև չուան քաշել, ֆեյֆ ուտել, մինչև կուրծքը տուրակի մէջ 100 մէթր վազք, մրջիւնի վազք, չուան քաշել, դերձանը ա-

սեղին անցնելէ վերջ 100 մէթր վազք, ոտքով և ձեռքով 100 մէթր վազք, հակիթը դգալին մէջ՝ դգալին կոթը բերանը և ձեռքերը ետին 100 մէթր վազք, բարձրութիւն ցատկել, պօֆս, ըմբշամարտութիւն, լողալ, գոք-պօք :

Գաղթավայրին անդլիացի պահակ զինուորները « Սիսուան » ի պօյ - սքաուդներուն հետ ֆութպօլ խաղալով, մեր կորիւնները երկու անգամուն ալ երկուքով երկուք հաւասար եկան :

Մրցումները տեւեցին 4 օր և մեծ ոգեւորութիւն բերին գաղթավայրին մէջ, վեր հանելով հայ փոքր կտրիճներու մարզական, և ինչո՞ւնակ չըսել մարտական տո՞մային բարեմասնութիւնները, այլևս անվիճելի :

~ ՕԳՆԵՑԷՒՔ Լ. Բ. Ը. Միութեան Բօր-Սայիթի « Սիսուան » վարժարանին, ուր շուրջ 2250 երկսեռ զոյգ ուսում կ'առնեն, 65 ուսուցիչներու կողմէ : ~



ԲՕՐ - ՍԱՅԻՏԻ ՀԱՅԿ. ԳԱՂՎԱՎԱՅՐԻ Լ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
 « ՍԻՍՈՒԱՆ » ԳՕՅ-ՍԿԱՌԻԴՆԵՐԸ ՄԱՐԶԱՆՔԻ ՄԻՋՈՑԻՆ

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Ո Ր Բ Ա Խ Ն Ա Մ Գ Ո Ր Ծ Ը

Գ. ՑՈՒՑԱԿ ՈՐԲԱԽՆԱՄ ՊԱՇՏՊԱՆՆԵՐՈՒ

Հետեւեալ բարեւէր մարմինները եւ ազգայինները ազնուաբար յանձն առած են Միութեան հովանիին ճակ գտնուած Ուրբանոցներուն մէջ որբերու պաշտպանութիւնը, իւրաքանչիւր որբի համար 12 Եգ. Ոսկի (60 Տօլ.) սարեվնարով .—

Ա. Բ. եւ Գ. Ցուցակ	Որբ	214
40 Բօթաբէրի Մասնաժողով		1
41 Սըրինկճիլիսի »		2
42 Քօննէլզվիլի »		2
43 Տ. Աս. Մաղաբեան (Ուէսք Բուլմէն)		1
44 Տ. Մուրաս Մուրասեան (Պրուիլին)		2
45 Տ. Սարգիս Սարգիսեան (Բրովիսէնս)		1
46 Հայ Աւես. « Եփրաս » Եկեղ. Տիկ. Բարեսիրական Ընկ. (Բրովիսէնս)		3
47 Հանգուցեալ Արփիար Քարահասեանի բարեկամներ (Ֆրէզնօ)		1
48 Զիբակօյի Մասնաժողովի միջոցաւ		56
49 Ֆրէզնօյի » »		18
50 Տ. Երուանդ Ազամեան		1
51 Բարեսիրաց Ընկ. (Ուէսք Հօպոբրն)		3
52 Որբ. Տիկնանց Ընկ. (Նիւ Հէվըն)		3
53 Տիթրոյթի Մասնաժողովի միջոցաւ		10
54 Տիկնանց Որբ. Ընկ. (Պրուսբիւր)		3
Համագումար պաշտպանուած որբերու		321

ՕԳՆԵՑՆԷՔ Հ. Բ. Ը. Միութեան Բօր-Սայիսի Որբանոց-Վարժարանին, ուր 350 որբեր եւ Տէօրք-Յօլի Քէլէկեան Որբանոց-Վարժարանին, ուր շուրջ 200 որբեր կը պասսպարուին, որպէսզի անոնք լաւ խնամուին եւ գաստարակուին, եւ նոր Որբանոցներ եւս հաստատուին եւ կարելի ըլլայ ուրիշ որբեր ընդունիլ Հ. Բ. Ը. Միութեան պաշտպանութեան ճակ. Որբ գլուխ սարեվնարն է կանխիկ 12 Եգ. Ոսկի = 60 տօլար :

ՈՐԲԱՆՊԱՍՏ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՀԻՐԷ.— Տ. Արամ Ներճիվանեան Ե. Ղ. 150, փոխան ծաղկեպսակի՝ այրի Տիկ. Նեկտար Եաղըճեանի մահուան առթիւ : Տ. Լեւոն Քօնչէկիւ Ե. Ղ. 150, նոյնպէս : Տ. Գէորգ Մազլում Ե. Ղ. 100, փոխան ծաղկեպսակի, Գարեգին Օհանեանի մահուան առթիւ : Տ. Լ Տիկ. Յ. Թաշճեան (Մինէթ էլ Կամ) Ե. Ղ. 100, նոյնպէս : Տ. Բարսեղ Պալըզճեան Ե. Ղ. 661.5 : Տ. Արտաշէս Նետուրեան 1 կարի մեքենայ : Տիկ. Վ. Արշարունի 400 հատ նարինջ, Չասկի տօնին առթիւ :

ՀԵԼՈՒԱՆ.— Տ. Պօղոս Թակոբեան Ե. Ղ. 500, իր մօր Տիկ. Մ. Թակոբեանի մահուան առթիւ : ՊՐԻՃԻՈՒԹՐ.— Հանդէսի մը հասոյթը Տօլ. 31, Տ. Ա. Պ. Քէլէկեանի ձեռամբ :

ՍԸՄԻԹ.— Հանդէսի մը հասոյթը Տօլ. 37 : ԶԸԼՍԻ.— Տ. Արամ Արսէնեանի հարսանիքին առթիւ հանգանակուած Տօլ. 103 : Տ. Պ. Պապիկեանի ձեռամբ Տօլ. 26.50 :

ՊՈՍԹՕՆ.— Տ. Ս. Յովհ., Տօլ. 38, Տ. Տիգրան Պօյաճեանի ընդ Օր. Հ. Կիրակոսեանի ամուսնութեան առթիւ : Տ. Լեւոն Օհանեանի հարսանիքին առթիւ հանգանակուած Տօլ. 100 : Տ. Պաղտասար Բալուցեան Տօլ. 5 : Մասնաժողովին միջոցաւ Տօլ. 484.75 :

ԲԻԶՄԸՆՏ.— Հանդէսի մը հասոյթը Տօլ. 538 : ՆԻԻ-ԵՕՐՔ.— Հայունեաց կարմիր կաշի Ընկ. Տօլ. 200 :

ԼՍՎԷՆ.— Որբախնամ Ընկ. Տօլ. 60 : ՎՈՒՆՍԱՔԷԹ.— Փոխան ծաղկեպսակի, փոքրիկ Նուրիկեանի մահուան առթիւ Տօլ. 22 :

ՊՐՈՒՔԷԼԻՆ.— Տօնավաճառի հասոյթ Տօլար 890.19 : ՎԱՇԻՆԿԹԸՆ.— Տեղ. Մասնաժողովին միջոցաւ Տօլ. 170.40 : Տիկ. Չարունի Պօղոսեան Տօլ. 2, « Կոչնակ »-ի միջոցաւ : Փոքրիկ Վարդունի Պօղոսեան Տօլ. 2.63, « Կոչնակի » միջոցաւ :

ՊԷՑՆԹՐԻ.— Տ. Ե. Կ. Չուլճեան Տօլ. 5 : ԼՍՍ ԱՆՃԵԼՈՍ.— Վեր. Երէցեանի միջոցաւ, փոխան ծաղկեպսակի, Մկրտիչ Կիւլէզեանի մահուան առթիւ, Տօլ. 52 :

ՀԵՎԸՐԶԻԼ.— Փոխան ծաղկեպսակի, Յակոբ Թէրզեանի մահուան առթիւ, Տօլ. 99 :

ԼՕՐԷՆՍ.— Տիկ. Որբախնամ Ընկ., Քէլէկ-

եան Որբանոցին համար կանխաւ հանգանակուած գումարի մնացորդը Տօլ. 290.19: Մասնաժողովին միջոցաւ Տօլ. 69.50:

ԶԻՔԱԿՈ.— Տիկ. Աղանի Պէրնսթընի սարքած հանդէսի հասոյթը Տօլ. 100:

ՍԷՆՔ ԲՕԼ - ՄԻՆ.— Farmer's Magazine թերթի խմբագրութեան կողմէ Տօլ. 32.25:

ՓԷԹԷՐՍԸՆ.— Տեղ. Մասնաժողովի միջոցաւ Տօլ. 360:

ՖԻԷՉՆՈ.— Տ. Արամ Զայիլեանի պակասորութեան առթիւ հանգանակուած Տօլ. 320: Տիկ. Հայկանոյ Տիւրկէրեանի մանչ զուակի մը ծննդեան առթիւ սարքուած խնջոյքի մը մէջ հաւաքուած Տօլ. 152.30:

ՄԷԼՊՈՒՐՆ.— Տ. Բ. Պալազեան Ա. Ոսկի 7.10.0:

ՈՒՆՍԱՔԷԹ.— Հայ Տիկնանց Որբ. Ընկ. Տօլ. 100:

ՏԻՖԱՅԷՆՍ ՕՀԱՅՈ.— Յովհան Գ. Մոսկօֆեան Տօլ. 10:

ԼԻԹԼ ՖՕԼԶ, ՄԻՆԵՉՕԲԱ.— Riverside Farmers' Circle Տօլ. 15:

ՏՈՒՐՈՅԹ.— Հայ Ժողով. Եկեղեցի Տօլ. 41:

ԱՆ ԱՐՊԸՐ.— Տիկ. Շուշան Տամպուրանեան Տօլ. 15:

ԶԻՒՐԻՆ (Զուիցերիա).— Տ. Գրիգոր Գարակեօզեանի ձեռամբ հանգանակուած Held & Co. Fr. 100: Eberhard & Co. 100: C. Wildberger 50: Schweizer & Co. 50: Huguenin Frères & Co. 200: A. Moser & Co. 10: Hermann Müller 10: H. Stade Imann 30: Glaetli & Ruppli 20: M. Köllner 5: Société de Banque Suisse 100: Union de Banque Suisse 100: Knüsly, Kappeler & Co. 50: R. Gradmann-Strub 100: M. Ganzoni & Co. 100: Mech. Seidenstoffweberei 100: Siber & Wehrli 100: Ruegger & Co. 20: Zuberbühler & Co., A. G. 20: Stünzi Söhne A. G. 100: G. Aschmann 50: Th. Gerber et Co. 100: B. Ruf et Co. 200: Albert Kirchgraber 50: Gebrüder Muser: 100: Pfund et Vallois 30: Felchlin et Co. 25: E. Filkenstein 40: Gessner et Co., A. G. 100: E. Leuthold 20: Schmidt et Lorenzen 50: Համազումար ֆր. 2500:

ՈՐԳԵՎՐԵՅԷՔ ԱԶՊԻՆ ՍԱՆԵՐԸ

Կեդր. վ.բ. Ժողովը պատրաստ է, որքան որ զգայիցներու, ինչպէս եւ որբախնամ մարմիններու հասցոյն եւ անուցով, ստանձնել անճնող եւ անաւ որբերու մշտական խնամատարութիւնը:

Որբերու պատշապան անհասներու եւ մարմիններու պիտի յանձնուի օրդեգրուած որբին լուսակարը եւ վիճակացոյցը, վկայագրի ձեւով:

Որբ գլուխ պատշապանութեան օտարակարգ եւ կանխիկ 12 Եզ. Ոսկի = 60 Տօլար:

Գիմել Կեդր. Ժողովին եւ կամ Կերական ու Որբախնամ Յանձնախումբին, Գահիրէ: Նիւ-Եօրթ՝ Տիկնանց Կեդր. Որբախնամ Յանձնախումբին:

ԾԱՆ.— Որբերու լուսակար-վկայագիրները պատրաստուելով հետզհետէ պիտի դրկուին պատշապան ազգայիցներուն եւ մարմիններուն:

ՈՐԲԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՆԵՐՈՒՆ

Կեդր. Ժողովը հարկ կը տեսնէ ծանուցանել թէ որբերու ընտրութիւնը կատարուելէն վերջ, կը նկատուի որ ոմանք ծնողը ունին եւ շատեր ալ ազգական, եւ թէ կը պատահի որ այս վերջինները կուզան Միութենէն պահանջել որբերը: Միւս կողմէ, յայտնի է որ Միութիւնը կ'ընդունի այն որբերը միայն որ անձնող եւ անտիրական են, որով եւ տէր ունեցող որբերը արդէն չի կրնար իր օրբանոցներուն մէջ պահել: Այդ պայմաններուն մէջ չի կրնար ո եւ է պատասխանատուութիւն ստանձնել, ու եթէ պատահի որ պաշտպաններու սահմանուած անձնող որբերը պահանջուին երեւան եկող իրենց ազգականներուն կողմէ՝ ուրիշ անձնող որբ մը կը յատկացուի պաշտպանին, նախորդ վկայագրին տեղ նոր մը յանձնելով:

